ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՃԻԿՅԱՆ

Ապրիլի 5-ին Երևանում վախճանվեց հայ արևելագիտության երախտավոր, ճանաչված պատմաբան-Թուրքագետ և հասարակական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Հովհաննես Գրիգորի Ինճիկյանը։

Հ. Գ. Ինճիկյանը ծնվել է 1913 թ. սեպտեմբերի 25-ին, Վրացական ԽՍՀ Ախալցխա քաղաքում։ Ավարտել է Թբիլիսիի հայկական մանկավարժական տեխնիկումը և Մոսկվայի պատմության, փիլիսոփայության ու գրականության ինստիտուտը։ 1939—1941 թթ. դասավանդել է Վ. Ի. Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիայում, 1941—1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին՝ նախ Տուլայի և Մոսկվայի մոտ, իսկ 1942 թ. նշանակվել է 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի 390-րդ գնդի զինվորական կոմիսար։ Զորացրվելով 1946-ին, Հ. Գ. Ինճիկյանը մինչև 1955 թ. գտնվել է պատասխանատու պաշտոններում՝ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Ռադիոյի պետական կոմիտեում, ՀԿԿ Կենտկոմում և Հայաստանի Մինիստրների խորհրդի ապարատում։ Միաժամանակ, 1955—1958-ին նա դասավանդել է Երևանի պետական համալսարանում և Վ. Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտում։ 1958-ից մինչև կյանքի վերջը աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում, սկզբում որպես արևելագիտության սեկտորի վարիչ, իսկ այնուհետև՝ 1971 թ. ստեղծված արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն։ 1983-ից նա նույն ինստիտուտի առաջատար գիտական աշխատող էր։ Հ. Գ. Ինճիկյանը 1964—1968 թթ. ՀԽՍՀ ԳԱ «Երբաբեր հասարակական գիտություններին» ամսագրի գլխավոր խմբագիրն էր։

Հ. Գ. Ինճիկյանի վաստակն արժեքավորելիս կարելի է առանձնացնել նրա ծառայությունները որպես պատմաբան-Թուրքագետի, հայ արևելագիտության կազմակերպչի և դասախոսմանկավարժի։

Հ. Ինճիկյան-պատմաբանի աշխատանքը եղել է նպատակասլաց՝ ուսումնասիրել Օսմանյան Թուրքիայի XIX դ. երկրորդ կեսի —XX դ. սկզբի ներքին պատմությունը, զարգացման ներքին օրինաչափությունները։ Նա առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ Օսմանյան կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների և բազմազգ բուրժուազիայի ձևավորման առանձնահատկությունների հատուկ ուսումնասիրմանը։ Հ. Գ. Ինճիկյանի երկարամյա գիտական պրպտումների արդյունքը «Օսմանյան կայսրության բուրժուազիան» խորագրով ծանրակշիռ հետազոտությունն էր, որը լույս տեսավ 1977-ին (ռուսերեն), իսկ նրա լրացված և նոր գլուխներով հարստացված տարբերակը՝ 1984-ին (հայերեն) «Օսմանյան կայսրության անկումը» վերնագրով։ Նշված մենագրություններում առաջ քաշված հարցադրումներն ու փաստարկված եզրակացությունները նոր խոսք էին Թուրքագիտության մեջ, ուստի և արժանացան բարձր գնահատականի՝ ինչպես Հայաստանի ու Միության, այնպես էլ արտասահմանյան գիտական հրապարակումներում։ Նորույթ էր այն, որ հեղինակը գիտական շրջանառության մեջ դրեց «Օսմանյան կայսրության բուրժուազիա» հասկացողությունը, այն հստակորեն տարբերելով «Թուրքական բուրժուազիայից», այսինքն նա ցույց տվեց, որ Թուրքական ազգային բուրժուազիայի ծագումից շատ առաջ Թուրքիայում ստեղծվել և զարգանում էր այլազգի, ոչ մահմեդական բուրժուազիան՝ հունական, հրեական և հայկական, որը մեծ դեր խաղաց երկրում կա-

պիտալիստական հարաբերությունների զարգացման մեջ, Օսմանյան պետության տնտեսական կյանքում։

Հ. Գ. Ինճիկյանն է ավել Օսմանյան կայսրության բուրժուազիայի զարգացման պարբերացումն ըստ չորս փուլերի, մի ներդրում, որն արժեքավորելով՝ Սոֆիայում լույս տեսնող «էթյուդ բալկանիկ» հեղինակավոր հանդեսը գրում է. «Հ. Գ. Ինճիկյանը հաստատում է Օսմանյան կայսրությունում բուրժուական հասարակարգի հետևյալ փուլերը. առաջին փուլ, որի ընթացքում կապիտալիստական զարգացումն ընթանում էր առանց թուրքերի կամ մահմեդական այլ տարրերի մասնակցության։ Երկրորդ փուլ՝ Թանզիմաթի դարաշրջան, երբ սկսվեց թուրքական բուրժուազիայի ձևավորումը իսկ օտարազգի բուրժուական խմբերի դիրքերն ամրապնդվեցին։ Երրորդ փուլ՝ 1880-ից մինչև երիտթուրքական հեղափոխությունը, երբ թուրքական բուրժուազիան ամրապնդեց իր դիրքերը և նույնիսկ սկսեց դուրս մղել օտարազգի բուրժուական խմբերին։ Չորրորդ փուլ՝ երիտթուրքերի կառավարման ժամանակաշրջանը, երբ տեղի ունեցավ այլազգի բուրժուազիայի կոնսոլիդացիան, իսկ թուրքական բուրժուազիան ուժեղացրեց իր ազդեցությունը քաղաքական բնագավառում և օգտագործեց քաղաքական իշխանությունը՝ այլազգի բուրժուազիային վերացնելու համար»։

Աշխատության մյուս արժանիքն Օսմանյան կայսրության անկման սոցիալ-տնտեսական պատճառների բացահայտումն է՝ փաստական բաղմաբնույթ տվյալների քննական վերլուծության ճանապարհով։ Հ. Գ. Ինճիկյանը համոզիչ հիմնավորեց Օսմանյան կայսրության փլուզման օրինաչափությունն ու պատմական անհրաժեշտությունը, հակադրվելով խորհրդային այն թուրքագետներին, ովքեր այսօր էլ դեռ սգում են օսմանյան «փառահեղ» կայսրության անկումը՝ փորձելով մեղմացնել կամ նույնիսկ անտեսել թուրքական բռնապետության արգելակող դերն այդ պետության մեջ բռնի ընդգրկված շուրջ երկու տասնյակ ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու կուլտուրական առաջադիմության գործում։ Սուլթանական դաժան տիրապետությունը, եզրակացնում էր Հ. Գ. Ինճիկյանը, խոչընդոտում էր հիմնական արտադրողական ուժի՝ հպատակ ժողովուրդների անկաշկանդ ու բնականոն զարգացումը, չստեղծելով անձի և գույքի այն անհրաժեշտ ապահովությունը, որն այդ զարգացման նախապայմանը պիտի լիներ։

Հ. Գ. Ինճիկյանի նշված զույգ աշխատություններն այսօր էլ խիստ այժմեական են, օգնում են ճիշտ կողմնորոշվելու Թուրքիայի նոր պատմության խրթին հարցերում, հստակ պատկերացնելու և ըմբռնելու Օսմանյան տիրահռչակ կայսրության բուն էությունը և, միաժամանակ, նրա երկարատև գոյության պատճառները։

Հ. Գ. Ինճիկյանի վերջին մենագրությունը, որն անվանի գիտնականն ուժերի գերագույն լարման գնով հասցրեց ավարտել մահից մի քանի շաբաթ առաջ, կրում է «Սոցիալական հոգեբանություն և ցեղասպանություն» խորագիրը։ Սա հույժ կարևոր, արդիական աշխատություն է, որի հրատարակումը կնպաստի ցեղասպանություն հասկացողության առավել լայն ըմբռնմանը, մարդկության դեմ ուղղված այդ վտանգավոր հանցագործության ու նրա գաղափարախոսների դատապարտման գործին։

Հ. Գ. Ինճիկյանի գրչին են պատկանում նաև հայ արևելագիտության պատմությանը նվիրված մի շարք արժեքավոր հոդվածներ։ Նրա բազմաթիվ զեկուցումներն ու գիտական հաղորդումները միութենական և միջազգային գիտաժողովներում, բովանդակալից ելույթներն արևելագիտական թեմաներով, մասնավորապես Թուրքիայի նոր և նորագույն պատմության վերաբերյալ, հանրապետական մամուլի էջերում, առանձնանում են թարմությամբ և գիտական հարցադրումների հրատապությամբ։

Հ. Գ. Ինճիկյանը հմուտ մանկավարժ էր, իր խորապես մարդկային նկարագրի համար սիրված ու հարգված՝ բազմաթիվ աշակերտներից և ուսանողներից։ Արևելագիտության բաժնի երկարամյա ղեկավարի եռանդուն ու հետևողական ջանքերի շնորհիվ Հայաստանում աճեցին երիտասարդ արևելագետների ու թուրքագետների կադրեր։

Մի քանի տասնամյակ Հ. Գ. Ինճիկյանի հասարակական բուռն գործունեությունը կապվել է Ասիայի ու Աֆրիկայի երկրների հետ համերաշխության շարժմանը։ Երկար տարիներ նա Ասիայի և Աֆրիկայի երկրների հետ համերաշխության հայկական կոմիտեի նախագահն էր։

Հայաստանի արևելագետները, պատմաբան-թուրքագետները, նրա բազմաթիվ գործընկերներն ու աշակերտները մեծ ակնածանքով կհիշեն Հովհաննես Ինճիկյանին՝ հայրենասեր գիտնականին, ազնիվ քաղաքացուն, շիտակ ու բարի մարդուն։

Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր